https://doi.org/10.46991/S&L/2022.92.037

ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՉԱՓՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Քրիստինե Ալեքսանյան
ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

Արժանապատվությունը սահմանադրական արժեքների համակարգում առաջնահերթ, առանցքային նշանակություն ունի. այն կանխորոշում է մարդու իրավունքների ու ազատությունների ողջ սպեկտրը և դրանց իրավական երաշխավորվածությունը: Սահմանադրության[1]՝ «Սահմանադրական կարգի հիմունքները» վերտառությամբ 1-ին գլխի 3-րդ հոդվածի 1-ին մասը հռչակում է, որ Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է, իսկ նրա անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է[2]: Սահմանադրության 203-րդ հոդվածը սահմանում է այս դրույթի անփոփոխելիությունը, իսկ 23-րդ հոդվածն իր հերթին նախատեսում է, որ մարդու արժանապատվությունն անխախտելի է:

Մարդկային արժանապատվության՝ անօտարելիության, անքակտելիության և անխախտելիության, մարդու բոլոր իրավունքների և ազատությունների հիմքը լինելու սահմանադրական բնութագրիչներն ընդգծում են դրա սահմանադրական բարձրագույն և հիմանդրութային արժեք լինելը: Ինչպես նշել է Սահմանադրական դատարանը. «Սահմանադրության 3-րդ հոդվածը, մարդուն հռչակելով որպես բարձրագույն արժեք, վերջինիս արժանապատվությունը դիտարկում է որպես սահմանադրական արժեհամակարգի հիմնաքար...»[3]: Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանի բնորոշմամբ՝ մարդկային արժանապատվությունը սահմանադրական կարգի օբյեկտիվ իրավական հիմքն է[4], այն մարմնավորում է սահմանադրական իրավունքի «հիմնական սահմանադրական սկզբունքը»[5] և, այդպիսով, միևնույն ժամանակ «սահմանադրության բարձրագույն արժեք է», որից բխում և որին ենթարկվում են մնացած բոլոր արժեքները[6]:

Մարդկային արժանապատվության հասկացության բնորոշումը միշտ էլ

---

[1] Ընդունվել է 06.12.2015: Ուժի մեջ է մտել 22.12.2015: Տե՛ս ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118:

[2] Նմանատիպ դրույթ նախատեսված է նաև Ալբանիայի, Բուլղարիայի, Սլովենիայի, Մակեդոնիայի, Էստոնիայի, Լտվայի, Սլովակիայի, Չեխիայի, Գերմանիայի, Ռուսաստանի, Բելառուսի, Մոլդովայի, Վրաստանի, Բոսնիա և Հերցեգովինայի, Ուկրաինայի և Լեհաստանի սահմանադրություններում:
Տե՛ս **Barak, A.** (2015). Human dignity as a value and as a right in constitutions. In Human Dignity: The Constitutional Value and the Constitutional Right (էջեր 49-66). Cambridge: Cambridge University Press, էջեր 56-57, doi:10.1017/CBO9781316106327.006:

[3] Տե՛ս Սահմանադրական դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 23-ի ՍԴՈ-1621 որոշումը:

[4] Տե՛ս **Dürig G** (1956) Der Grundrechtssatz der Menschenwürde – Entwurf eines praktikablen Wertsystems der Grundrechte aus Art. 1 Abs. I in Verbindung mit Art. 19 Abs. II des Grundgesetzes. Arch Offentlichen Rechts 81:117–157, էջ 122:

[5] Տե՛ս Գերմայիայի Դաշնային Սահմանադրական դատարանի 1 BvR 536/72 = BVerfGE 35, 202 (235) 1973 թվականի հունիսի 5-ի որոշումը և 1 BvR 357/05 (Aviation Security Act) 2006 թվականի փետրվարի 15-ի որոշումը:

[6] Տե՛ս նույն տեղը:

քննարկման և սուր բանավեճերի առարկա է եղել ինչպես իրավաբանական, այնպես էլ փիլիսոփայական գրականությունում: Մարդու արժանապատվության իրավական հայեցակարգը սահմանելը բարդ գործ է, և պատահական չէ, որ այն հաճախ նաև անօգուտ է համարվել[1]: Շվեյցարիայի Դաշնային Գերագույն դատարանն իր որոշումներից մեկում նշել է, որ բովանդակային առումով Դաշնային Սահմանադրության՝ մարդկային արժանապատվությանը նվիրված 7 BV-ի հոդվածը «բաց նորմ» է, որը հնարավոր չէ սպառիչ սահմանել, քանի որ այն «ի վերջո վերաբերում է մարդկային էակներին և մարդու անշոշափելի ներքին որակին»[2]:

Այնուամենայնիվ, մարդկային արժանապատվության թեկուզ մոտավոր էության բացահայտումն անհնար է առաց գերմանացի փիլիսոփա Իմանուել Կանտի հետևյալ ձևակերպման. «Նպատակների թագավորությունում ամեն ինչ ունի կա՛մ գին, կա՛մ արժանապատվություն: Այն, ինչ գին ունի, կարող է փոխարինվել ինչ-որ այլ բանով՝ որպես դրա համարժեքը. մինչդեռ այն, ինչ բարձր է ցանկացած գնից և, հետևաբար, չունի համարժեք, արժանապատվություն ունի»[3]: Այսպիսով, մարդկային նպատակների ոլորտում Կանտը տարբերություն է դնում, թե ինչը գին ունի, և ինչը՝ արժանապատվություն: Որպես ազատ կամքով ողջամիտ արարած՝ մարդը բարոյական ինքնավարություն ունի, որը թույլ է տալիս նրան սահմանելու իր նպատակները[4]: Մարդկային էակների այս հատկությունից է, որ Կանտը բխեցնում է նրանց արժանապատվությունը, որի բնույթը այն է, որ մարդկային արարածը պետք է օգտագործվի մեկ այլ անձի կողմից ոչ թե պարզապես որպես միջոց, այլ՝ միշտ որպես նպատակ: Հետևաբար՝ յուրաքանչյուր ոք օրինական իրավունք ունի հարգվելու իր նմանների կողմից և միևնույն ժամանակ պարտավոր է ճանաչել յուրաքանչյուր այլ անձի արժանապատվությունը[5]: Մտքերի այս ընթացքը տպավորիչ դրսևորվում է Կանտի կատեգորիկ հրամայականի երկրորդ ձևակերպմամբ (որը հայտնի է որպես «ինքն իր նպատակի» բանաձև). «Վարվի՛ր այնպես, որ մարդուն վերաբերվես որպես նպատակի և երբեք՝ որպես միջոցի»[6]: Հետևելով այս ելակետային դրույ-

---

[1] Արժանապատվության հասկացության բնորոշման բարդությամբ է թերևս փորձ արվում հիմնավորել նաև այն, թե ինչու մարդու իրավունքներին նվիրված կարևորագույն փաստաթղթերից մեկը՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան, մարդկային արժանապանտվությանը վերաբերող ուղղակի դրույթ չի պարունակում: Սա բացատրվում է նրանով, որ անդամ պետությունները չեն կարողացել պայմանավորվել դրա ճշգրիտ ծավալի և առավել ևս միջամտությունների հնարավոր արդարացումների մասին: Այնուամենայնիվ, խոշտանգումների արգելմանը վերաբերող 3-րդ և ստրկության ու հարկադիր աշխատանքի արգելմանը վերաբերող 4-րդ հոդվածներում կոնվենցիան նախատեսում է մարդկային արժանապատվության պաշտպանության որոշակի երաշխիքներ, որոնք չեն կարող սահմանափակվել: Ինչպես նշում են Ս. Հեսելհաուսն ու Ռ. Հեմսլեյը. «ՄԻԵԴ-ը պրագմատիկ կերպով խուսափում է մարդու արժանապատվության համընդհանուր ընդունված սահմանման շուրջ համաձայնության բացակայության հարցից՝ ապահովելով մարդկային արժանապատվության այն հիմնական տարրերի բացարձակ պաշտպանությունը, որոնց վերաբերյալ գոյություն ունի եվրոպական համձայնություն»: Տե՛ս **Heselhaus S., Hemsley R.** (2019) Human Dignity and the European Convention on Human Rights. In: Becchi P., Mathis K. (eds) Handbook of Human Dignity in Europe. Springer, Cham., էջեր 979-980, https://doi.org/10.1007/978-3-319-28082-0_47:

[2] Տե՛ս **Laternser P** (2016) Der Gehalt von Art. 7 BV: zur Begründung der bundesgerichtlichen Menschen. würdekonkretisierung. Schulthess, Zurich/Basel/Geneva, էջ 22:

[3] Տե՛ս **Kant I** (1785) Grundlegung zur Metaphysik der Sitten. In: Kants Werke, Akademie-Textausgabe, Volume IV, De Gruyter, Berlin 1968, էջ 434, Quoted in English after: Immanuel Kant: Groundwork of the Metaphysics of Morals, translated and edited by **Mary Gregor and Jens Timmermann**, Cambridge University Press, revised edition 2012 [1785], էջ 46:

[4] Տե՛ս նույն տեղում:

[5] Տե՛ս նույն տեղում, էջ 41:

[6] Տե՛ս նույն տեղում:

թին՝ Կանտի արժանապատվությունը սովորաբար մեկնաբանվում է որպես գործիքայնացման արգելք (մարդկանց օգտագործումը որպես նպատակին հասնելու միջոցի արգելք). մարդը չպետք է լիովին գործիքայնացվի այլ մարդկանց նպատակների համար[1]:

Մարդկային արժանապատվության էության մասին կանտյան փիլիսոփայության ընկալումը՝ մարդուն միշտ վերաբերվել որպես նպատակի և ոչ երբեք որպես միջոցի կամ օբյեկտի, իր խոր ազդեցությունն է թողել մարդկային արժանապատվության բնորոշման իրավական հակեցակարգի վրա:

Տարբեր երկրների սահմանադրական դատարանները մարդկային արժանապատվությունը բնորոշել են՝ հիմքում ունենալով Կանտի սահմանումը: Արժանապատվության կանտյան բնորոշման դրսևորումները կարելի գտնել Չեխիայի Սահմանադրական դատարանի[2], Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանի[3], Լեհաստանի Սահմանադրական տրիբունալի[4], Սլովակիայի Սահմանադրական դատարանի[5] և Շվեյցարիայի Դաշնային Գերագույն դատարանի[6] որոշումնե-

---

[1] Տե՛ս **Mahlmann M** (2013) Die Garantie der Menschenwürde in der Schweizerischen Bundesverfassung. Aktuelle Juristische Praxis 22:1307–1320, էջ 1311:

[2] Չեխիայի Սահմանադրական դատարանը № I. ÚS 557/09 գործում մարդու արժանապատվության իր ընկալումը հիմնել է հայտնի «օբյեկտի բանաձևի» վրա, որտեղ ասվում էր, որ «մարդկային արժանապատվությունը խախտվում է այն դեպքերում, երբ պետությունը **մարդուն դնում է օբյեկտի դերում,** երբ մարդը դառնում է պարզ միջոց և վերածվում է փոխադարձ փոխարինելի ապրանքի»: Տե՛ս The Constitutional Court of the Czech Republic Judgment of 18 August 2009, no. IV. ÚS 557/09, պարագրաֆ 18:

[3] Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանը նշել է. «... նպատակը չի կարող իրականացվել մարդկային **արժանապատվության ոտնահարման միջոցով՝** ուղևորներին և անձնակազմի անդամներին **գործիքի վերածելով**, զոհաբերելով նրանց ավելի բարձր նպատակի համար»: Տե՛ս FCC Judgment of 15 February 2006 – 1 BvR 357/05 (Aviation Security Act):

[4] Լեհաստանի Սահմանադրական դատարանը նշում է, որ «մարդուն պետք է վերաբերվել **որպես ազատ, ինքնավար սուբյեկտի**, որը կարող է զարգացնել իր անձը և ձևավորել իր սեփական վարքագիծը» (2008 թվականի սեպտեմբերի 30-ի Սահմանադրական դատարանի որոշումը, 2013 թվականի հունվարի 25-ի Վարշավայում Վերաքննիչ դատարանի որոշումը): Ընդգծվում է, որ անձի արժանապատվությունը հակասում է **անհատի՝ որպես գործիքի** վերաբերմունքին: Տե՛ս **Bosek L** (2012) Gwarancje godności ludzkiej i ich wpływ na polskie prawo cywilne. Wydawnictwo Sejmowe, Warszawa:

[5] 2016 թվականի նոյեմբերի 9-ի I. ÚS 689/2014 գործում Սլովակիայի Սահմանադրական դատարանը, քննելով ստորադաս ատյանների ընդհանուր իրավասության դատարանների որոշումները, նշել է. «Հենց մարդկային արժանապատվությունը, բարի համբավը և անունը կամ անձնական պատիվն են բացառում մարդու հետ վարվելը **որպես պարզ օբյեկտի կամ առարկայի** համապատասխան իրավական հարաբերություններում: Մարդկային արժանապատվությունը արժեք է, որը հորիզոնականորեն անհամեմատելի է սահմանադրական այլ արժեքների կամ հասարակական նորմերի հետ, և այն բացարձակապես անփոխարինել է այլ բարիքներով, առավել ևս քանակական կամ նույնացվող գումարով որոշվող արժեքներով:» Տե՛ս **Ľalík T.** (2019) Human Dignity in Slovakia. In: **Becchi P., Mathis K.** (eds) Handbook of Human Dignity in Europe. Springer, Cham., էջ 811 https://doi.org/10.1007/978-3-319-28082-0_37:

[6] Շվեյցարիայի Դաշնային Գերագույն դատարանը նշել է, որ մարդկային արժանապատվության բովանդակությունը վերաբերում է «անհատների՝ իրենց ներքին արժեքի և անհատական յուրահատկությանը և, թերևս, տարբերությունների ճանաչմանը»: Այս բոլոր մոտեցումներում կենտրոնական տեղ են զբաղեցնում յուրաքանչյուր մարդու ճանաչումն ու հարգանքը՝ **որպես անհատի և յուրահատուկ, անկրկնելի սուբյեկտի:** Ամփոփելով կարող ենք նշել, որ մարդու արժանապատվությունը դրսևորվում նրա յուրահատկության և, հետևաբար, նրա՝ **որպես սուբյեկտի** հատկանիշների մեջ: Տե՛ս **Mathis K., Hammer B.** (2019) Human Dignity in Switzerland. In: Becchi P., Mathis K. (eds) Handbook of Human Dignity in Europe. Springer, Cham., էջեր 890-891, https://doi.org/10.1007/978-3-319-28082-0_41:

ում: Արտասահմանյան այս երկրների սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմինների՝ արժանապատվության էության բնորոշումները հանգում են նրան, որ մարդն ազատ, ինքնավար, յուրահատուկ և անկրկնելի սուբյեկտ է, ինչը նշանակում է, որ պետությունը երբեք մարդուն չպետք է դիտարկի որպես օբկյեկտ կամ գործիք որևէ նպատակի հասնելու համար:

Մարդկային արժանապատվության էության բնորոշման այս մոտեցման շուրջ կարծեք թե որոշակի համաձայնություն կա նաև իրավաբանական գրականության մեջ: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններում նշվում է. «Մարդու իրավունքները բխեցվում են մարդկային անհատի արժեքից: Անձի բարձր արժանապատվություն՝ ահա մարդու իրավունքների հիմքը»:[1] Ա. Մանասյանը ևս համաձայնել է այն մոտեցմանը, որ « ... սահմանադրական կարգավորումները հանգեցրին մարդու, նրա արժանապատվության, հիմնական իրավունքների և ազատությունների առնչությամբ սկզբունքորեն նոր ընկալման, որի շրջանակներում մարդը որևէ պարագայում *չի կարող դիտարկվել որպես միջոց, գործիք* պետական իշխանության ձեռքում, այլ հանդես է գալիս որպես իր անկրկնելի բնության մեջ ինքնանպատակ, ինքնարժեքություն»[2]: Շվեյցարացի իրավաբան Ուոլթեր Հալլերը մարդկային արժանապատվությունից դուրս է բերում «մարդկային էակին՝ որպես ազատ և բանականությամբ օժտված էակի, հարգելու պատվիրանը՝ միշտ վերաբերվելու *նրան որպես իրավունքի սուբյեկտի, այլ ոչ թե պարզապես որպես օբյեկտի,* որը յուրաքանչյուր մարդու բնորոշ արժանապատվությունն է և պետք է հարգվի բոլոր մարդկանց կողմից հավասարապես»[3]:

Արժանապատվության իրավունքի սահմանադրահիրավական հիմնական բնութագրիչը նրա անխախտելիությունն է, ինչը նշանակում է, որ վերջինս բացարձակ, այն է՝ սահմանափակման ոչ ենթակա իրավունք է: Այսպես, Սահմանադրական դատարանը 2011 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-997 որոշմամբ ուղղակիորեն նշել է. «ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածը ... Սահմանադրության 43-րդ հոդվածի հիմքով ենթակա չէ սահմանափակման»: Արժանապատվության իրավունքի բացարձակ լինելը ճանաչել են նաև Ալբանիայի, Գերմանիայի, Լեհաստանի, Սլովակիայի և այլ երկրների սահմանադրական դատարանները[4]: Ինչպես նշում է Մ. Բորովսկին. «Որպես հիմնական իրավունքների պաշտպանության հիմք՝ մարդկային արժանապատվության անձեռնմխելիության մեջ արտահայտված նորմատիվ պահանջը ոչ միայն անխախտելի է, այլ նաև բացարձակ. ոչ մի պարագայում այն չի կարող սահմանափակվել՝ համադրվելով այլ պահանջների հետ»[5]:

Արժանապատվության իրավունքի բարցարձակ լինելու համատեքստում գիտագործնական առումով հետաքրքրություն է ներկայացնում համաչափության սկզբունքի և արժանապատվության իրավունքի հարաբերակցության հարցի ուսում-

---

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի. – Եր.: «Իրավունք», 2010, էջ 163:

[2] Տե՛ս Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում (գիտագործնական հետազոտություն)/ **Գ.Բ. Դանիելյան, Վ.Ն. Այվազյան, Ա.Ա. Մանասյան**: Ընդհ. Խմբ. **Գ. Դանիելյանի** – Եր.: Հայրապետ հրատ., 2015, էջ 112:

[3] Տե՛ս **Haller W** (2007) Menschenwürde, Recht auf Leben und persönliche Freiheit. In: Merten D, Papier HJ (eds) Handbuch der Grundrechte in Deutschland und Europa, Volume VII/2 Grundrechte in der Schweiz und in Liechtenstein. C.F. Müller, Heidelberg/Zurich/St. Gallen, էջ 200:

[4] Տե՛ս **Becchi P., Mathis K.** (eds) (2019) Human Dignity in Switzerland. In: Handbook of Human Dignity in Europe. Springer, Cham, էջեր 60, 294, 705-707:

[5] Տե՛ս **Borowski M** (2013) Absolute rights and proportionality. German Yearb Int Law 56:385–423, էջ 398:

նասիրությունը: Ինչպես հայտնի է, համաչափությունը սահմանադրական սկզբունք է, որը կիրառվում է հարաբերական սահմանադրական իրավունքների սահմանափակման դեպքում՝ այդ իրավունքներին չափից ավելի և չհիմնավորված միջամտությունը բացառելու նպատակով:

Այս աշխատանքի շրջանակներում արժանապատվության իրավունքի և համաչափության սկզբունքի հարաբերակցությանն անդրադառնալու ենք երկու ասպեկտներով:

Առաջին, ինչպես արդեն նշեցինք վերևում, արժանապատվության իրավունքը պահաջում է, որ պետությունն իր գործողություններում մարդուն երբեք չդիտարկի օբյեկտ կամ գործիք՝ որևէ նպատակի հասնելու համար: Այս առումով հարց է առաջանում, թե կոնկրետ իրավիճակում ինչպես պետք է գհանատվի այն, թե արդյոք պետությունը մարդուն օգտագործել է որպես գործիք՝ դրանով իսկ խախտելով նրա արժանապատության իրավունքը: Այս հարցի ապատասխանը հնարավոր է համաչափության սկզբունքի կիրառման միջոցով:

Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ) 3-րդ հոդվածի՝ խոշտանգումների կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի խախտումը փաստում է հենց համաչափության սկզբունքի կիրառման արդյունքում: ՄԻԵԴ-ը բազմիցս նշել է, որ ֆիզիկական ուժի ցանկացած կիրառում իրավապահ մարմինների պաշտոնատար անձի կողմից, որը «**խիստ անհրաժեշտ**» չի եղել մարդու վարքի պատճառով, «նվաստացնում է մարդկային արժանապատվությունը և սկզբունքորեն խախտում է խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը, որը շարադրված է ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածում»[1]: Նույն ձևով դատարանը ՄԻԵԿ-ի 2-րդ հոդվածի (կյանքի իրավունք) խախտում չի արձանագրել այն դեպքերում, երբ ուժի կիրառումը **բացարձակապես անհրաժեշտ** է եղել կոնվենցիայի իմաստով[2]:

Արժանապատվության իրավունքի խախտման փաստի հաստատման գործում համաչափության սկզբունքի նման կիրառումը հիմք է հանդիսացել իրավաբանական գրականության մեջ այն մոտեցման հիմնավորման համար, որ արժանապատվության իրավունքը կարող է հավասարակշռվել մրցակցող շահերի հետ՝ չնայած անխախտելիության մասին դրույթի առկայությանը[3]:

Գտնում ենք, որ այս մոտեցումը ոչ միայն շեղվում է արժանապատվության իրավունքի անխախտելիության սահմանադրական պահանջից, այլ նաև չի համապատասխանում համաչափության սկզբունքի այն նշանակությանը, որը նա ունի արժանապատվության իրավունքի խախտման փաստը որոշելու հարցում: Ինչպես նշվեց վերևում, մարդկային արժանապատվությունը բացարձակ իրավունք է և լինելով բոլոր իրավունքների հիմքը՝ չի կարող հավասարակշռվել այլ իրավունքների հետ: Եվ թեև համաչափության սկզբունքը կիրառվում է հարաբերական իրավունքների սահմանափակումների հիմնավորվածությունն ապահովելու նպատակով, այս դեպքում այն ունի մեկ այլ նպատակ և կիրառում, այն է՝ օգնել մեկնաբանելու արժանապատվության իրավունքի խախտման որոշման համար անհրաժեշտ այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ Սահմանադրության 2-րդ հոդվածում նշված

---

[1] Տե՛ս, օրինակ, ECtHR, Zakharov and Varzhabetyan v. Russia, (Applications nos. 35880/14 and 75926/17), 13 October 2020, ECtHR, Cestaro v. Italy, (Applications no 6884/11), 7 April 2015:

[2] Տե՛ս Giuliani and Gaggio v Italy [2009] ECHR 23458/02 (25 August 2009):

[3] Տե՛ս **Bäcker C.** (2021) Limited Balancing: The Principle of Human Dignity and Its Inviolability. In: Sieckmann JR. (eds) Proportionality, Balancing, and Rights. Law and Philosophy Library, vol 136. Springer, Cham, էջեր 85-111, https://doi.org/10.1007/978-3-030-77321-2_4:

կյանքից զրկելու *կամայական*, Սահմանադրության 26-րդ կամ ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածում նշված վերաբերմունքի կամ պատժի *անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող* լինելը: Այսինքն՝ համաչափության չափանիշը կիրառվում է ոչ թե մարդկային արժանապատվության՝ որպես բացարձակ արժեքի նկատմամբ, այլ միայն նշված հասկացությունների մեկնաբանության նկատմամբ:

Կարծում ենք, որ հենց հիշյալ ընկալմամբ պետք է բացատրել թե՛ դատարանների կողմից համաչափության սկզբունքի կիրառումը արժանապատվության իրավունքի խախտման փաստը որոշելիս, թե՛ այն հանգամանքը, որ միջազգային-իրավական փաստաթղթերում համաչափության սկզբունքն է հանդիսանում ուժի և հատուկ միջոցների կիրառման իրավաչափությունը կանխորոշող հիմնական չափանիշը[1], որը որոշում է առավելագույն ուժը, որը կարող է օգտագործվել կոնկրետ օրինական նպատակին հասնելու համար:

Այսպես, համաչափության լեգիտիմ նպատակի տարրը պահանջում է, որ ուժի կիրառումը կարող է արդարացված լինել միայն այն դեպքում, երբ այն ուղղված է օրինական իրավապահ նպատակին հասնելուն: Համաչափության անհրաժեշտության տարրը ներառում է ուժի կիրառմանն ուղղված երկու պայման: Առաջինը պահանջում է, որ իրավապահ լեգիտիմ նպատակին հասնելու համար այդ պահին ոչ մի ողջամիտ այլընտրանք չլինի, բացի ուժի կիրառումից: Երբ ուժի կիրառումը ողջամտորեն անհրաժեշտ է տվյալ իրավիճակում, անհրաժեշտության երկրորդ պայմանը պահանջում է, որ կիրառվի միայն նվազագույն ուժը, որն անհրաժեշտ ու բավարար է հետապնդվող լեգիտիմ նպատակին հասնելու համար: Համաչափության համարժեքության տարրն իր հերթին ենթադրում է, որ այն սպառնալիքը, որը ներկայացնում է ֆիզիկական անձը իրավապահ մարմինների աշխատակցի կամ հանրության համար, որոշելու է ուժի առավելագույն մակարդակը, որը կարող է համաչափորեն կիրառվել: Ինչպես տեսնում ենք, համաչափության սկզբունքի տարրերից և ոչ մեկը չի կիրառվում արժանապատվության իրավունքի նկատմամբ, սակայն այս տարրերից ցանկացածի խախտումը հիմք է պետության կողմից արժանապատվության իրավունքի և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի արգելքի խախտումը փաստելու համար:

Վերը ներկայացված վերլուծությունների համատեքստում հետաքրքիր գործնական օրինակ կարող է ծառայել Շվեյցարիայի Դաշնային Գերագույն դատարանի կողմից 2017 թվականին քննված գործը[2], որը վերաբերել է ոստիկանության գործողությունների իրավաչափության գնահատմանը՝ անձանց կանգնեցնելու, նրանց ժամանակավորապես ձերբակալելու և այնուհետև ոստիկանության բաժանմունք տեղափոխելու ընթացքում: Դատարանն ուսումնասիրել է այն հարցը, թե արդյոք անձնական զննումը, որը եղել է բողոքի առարկա, համապատասխանել է մարդկային արժանապատվությանը: Վկայակոչելով Սահմանադրության 7-րդ (արժանապատվության իրավունքը) և ՄԻԵԿ 3-րդ հոդվածները՝ դատարանը այս կապակցությամբ հստակեցրել է. այն հարցի պատասխանը, թե արդյոք անձնական զննումը խախտել է մարդու արժանապատվությունը և հանդիսացել է արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք, կախված է տվյալ իրավիճակում միջոցի համաչափությունից: Դատարանը գտել է, որ մերկացրած անձնական զննումը անհամաչափ միջոց է, եթե հագուստով խուզարկությունը տվյալ իրավիճակում կարող էր բավարար լինել: Նա նշել է, որ տարածված պրակտիկան պահանջում է, որ կասկածյալներին մերկացնելը՝ նրանց մարմնի վրա թաքնված ապացույցները լավա-

[1] Տե՛ս օրինակ Code of Conduct for Law Enforcement Officials, (հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.ohchr.org/en/professionalinterest/pages/lawenforcementofficials.aspx 25.02.2022 թ. դրությամբ):

[2] Տե՛ս Շվեյցարիայի Դաշնային Գերագույն դատարանի 2017 թվականի ապրիլի 11-ի BGer 1B_176/2016 որոշումը:

գույնս գտնելու համար, ընդունելի է միայն այն դեպքում, եթե նման իրերը հնարավոր չէ գտնել հագուստի պարզ ստուգման միջոցով: Տվյալ դեպքում կասկածյալը ոստիկանության բաժին էր տեղափոխվել պաշտոնատար անձանց ծառայողական պարտականությունների կատարումը խոչընդոտելու կասկածանքով: Դատարանը հանգել է այն եզրակացության, որ մերկացմամբ զննումը եղել է այդպիսի մեղադրանքի հետաքննության ոչ պիտանի և ուստի անհամաչափ միջոց: *Արդյունքում Շվեյցարիայի Դաշնային Գերագույն դատարանը հաստատել է Շվեյցարիայի Սահմանադրության 7-րդ հոդվածի և ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածի խախտումը՝ եզրահանգելով, որ այդ գործով անձը դիտարկվել է որպես* ***վարույթի պարզ օբյեկտ****:*

Այսպիսով, արժանապատվության իրավունքի և համաչափության սկզբունքի հարաբերակցության առաջին ասպեկտը դրսևորվում է, երբ որ համաչափության սկզբունքը հանդես է գալիս արժանապատվության իրավունքի խախտման փաստը որոշելու գործիք՝ որպես արժանապատվության իրավունքի ծավալը որոշելու համար նշանակություն ունեցող հասկացությունների մեկնաբանության միջոց: Այդպիսով, այն դեպքում, երբ պետությունն օգտագործում է անհամաչափ միջոցներ, անխուսափելիորեն խախտում է մարդու արժանապատվության իրավունքը՝ նրան դիտարկելով որպես միջոց:

Երկրորդ, եթե համաչափության սկզբունքը պատկերավոր բնորոշմամբ գործում է որպես «սահմանափակումների սահմանափակում»[1], ապա մարդկային արժանապատվությունը գործում է որպես «սահմանափակումների անհաղթահարելի սահմանափակում»:

Արժանապատվության իրավունքը կարող է բնորոշվել որպես մարդու իրավունքների սահմանափակման իրավաչափության գնահատման չափանիշ, որը համաչափության սկզբունքի հետ սահմանափակում է պետության կողմից մարդու իրավունքներին միջամտությունը: Այսպես, համաչափության սկզբունքի համարժեքության տարրը պահանջում է, որ մարդու իրավունքների սահմանափակման արդյունքում իրավունքին հասցվող վնասը չգերազանցի հետապնդվող լեգիտիմ նպատակի իրականացմամբ ձեռք բերվող օգուտը: Արժանապատվության իրավունքն իր հերթին գործում է համաչափության սկզբունքի հետ՝ բացառելով մարդու սահմանադրական իրավունքին այնպիսի միջամտությունը, երբ նա վերածվում է հետապնդվող նպատակի իրականացման միջոցի: Այս դեպքում համաչափության սկզբունքի և արժանապատվության իրավունքի հարաբերակցությունը կարող ենք ներկայացնել հետևյալ բանաձևի միջոցով. արժանապատվության իրավունքը համաչափության սկզբունքի համարժեքության փուլում բացառում է իրավունքի էությանն այնպիսի վնասը, որը չի կարող արդարացվել հետապնդվող նպատակի իրականացման արդյունքում որևէ օգուտի ձեռքբերմամբ:

Արժանապատվության իրավունքի այս գործառույթը կարող ենք բխեցնել արժանապատվության՝ մարդու բոլոր սահմանադրական իրավունքների էության ելակետը լինելու գաղափարից (Սահմանադրության 3-րդ հոդված), արժանապատվության անխախտելիությունից (Սահմանադրության 23-րդ հոդված) և մարդու հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությամբ ամրագրված դրույթների էության անխախտելիության պահանջից (Սահմանադրության 80-րդ հոդված):

Մասնավորապես, Սահմանադրության 3-րդ հոդվածից բխում է, որ մարդկային արժանապատվությունը սահմանադրական հիմնական իրավունքների նյութական սահմանադրական հիմքն է, իսկ հիմնական իրավունքները իրենց հերթին որոշակիացնում են մարդկային արժանապատվության առանձին ասպեկտները: Մարդկային արժանապատվությունը և անձի հիմնական իրավունքները, հատկապես

[1] Տե՛ս Սահմանադրական դատարանի 2020 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ-1546 որոշումը, կետ 4.4:

դրանց էությունը, որոշակիացման փոխադարձ հարաբերակցության մեջ են: Մարդկային արժանապատվության և հիմնական իրավունքների այս կապը պատկերավոր ներկայացնում է Ս. Էնդերսը: Ըստ նրա՝ մարդիկ՝ որպես անհատներ, լինելով հիմնական օրենքով անվերապահորեն ճանաչված բարձրագույն արժեք, ունեն «իրավունքներ ունենալու իրավունք»՝ արժանապատվության իրավունք: Ըստ այդմ հեղինակը արժանապատվության իրավունքը բնութագրում է որպես մարդկանց «նախասկզբնական իրավունք», քանի որ առանց մարդկային արժանապատվությանը հավատարմության, որը մարդկանց որակում է որպես անհատներ, անհնար է պատկերացնել այն իրավունքները, որոնք պատկանում են նրանց: Միևնույն ժամանակ, մարդկային արժանապատվությունը ոչ մի շանս չունի հաստատվելու որպես համընդհանուր սկզբունք, եթե նրա պաշտպանության համար չլինեն կատարման ենթակա իրավունքներ[1]: Ինչպես նշում է Գերմանիայի Դաշնային սահմանադրական դատարանը, «առանց արժանապատվության չկան իրավունքներ, առանց իրավունքների չկա արժանապատվություն»:

Այս առումով, քանի որ մարդկային արժանապատվությունը՝ որպես իրավունքների էության աղբյուր, անխախտելի է, բոլոր հիմնական իրավունքների բուն բովանդակությունը կամ էությունը նույնպես անխախտելի է, քանի որ հիմնական իրավունքի բուն էության ցանկացած խախտում միշտ արժանապատվության իրավունքի խախտում է, և ընդհակառակը՝ արժանապատվության իրավունքի ցանկացած խախտում մարդու իրավունքների բուն էության խախտում է:

Հետաքրքրական է, որ Նիդերլանդների սահմանադրական բարեփոխումների Թագավորական հանձնաժողովը քննարկել է, որ մարդկային արժանապատվության գաղափարի ինկորպորացումը Սահմանադրության մեջ կարող է ծառայել ուղենիշային մեկնակետ՝ իրավունքների միջև բախման դեպքում ընտրություն կատարելու և որոշ իրավունքների բուն էությունը (անխախտելի միջուկը) որոշելու համար: Մարդկային արժանապատվության հայեցակարգի այս վերջին դերը կապված է եղել Թագավորական հանձնաժողովի հենց այն նպատակի հետ, որ Սահմանադրության՝ մարդու իրավունքներին վերաբերող գլխում նախատեսվի դրույթ, ըստ որի՝ իրավունքների ցանկացած սահմանափակում երբեք չի կարող միջամտել այդ իրավունքի բուն էությանը[2]:

Վերոնշվածի համատեքստում որպես գործնական օրինակ կարող ենք ներկայացնել արտասահմանյան երկրների սահմանադրական դատարանների կողմից քննարկած այն իրավիճակները, երբ պետությունը ոչնչացնում է ահաբեկիչների զավթած օդանավը՝ ցամաքում մարդկային և նյութական հնարավոր կորուստները կանխելու համար: Գերմանիային Դաշնային Սահմանադրական դատարանը փաստել է, «որ օդանավի դիտավորյալ ոչնչացումը կնշանակեր օդանավի վրա գտնվող ահաբեկիչ չհանդիսացող անձանց՝ որպես սուբյեկտների կարգավիճակի անտեսում և դրանով իսկ նրանց իրենց իրավունքներից լիովին զրկում: Մարդու արժանապատվության պաշտպանության նպատակով օրենսդրին արգելվում է ուղևորների գոյության իրավունքը համեմատել օրենքով պաշտպանված շահերի հետ, որոնք կարող են տուժել ավիավթարի հետևանքով»: Լեհաստանի Սահմանադրական տրիբունալը ևս նշել է, որ. «.... պետական կառավարման մարմնի լիազորությունը՝ կանխամտածված մահ պատճառել ինքնաթիռի ուղևորներին՝ ահաբեկչական ակտով սպառնացող այլ անձանց պաշտպանության նպատակով, խախտում է (...) արժանապատվության իրավունքի սահմանափակման սահմանադրական արգելքը,

[1] Տե՛ս **Enders C** (2010) A right to have rights – the German constitutional concept of human dignity. Natl Univ Juridical Sci Law Rev 3(3):253–264, էջեր 251 և 279:

[2] Տե՛ս **Loof JP.** (2019) Human Dignity in the Netherlands. In: Becchi P., Mathis K. (eds) Handbook of Human Dignity in Europe. Springer, Cham., էջ 652, https://doi.org/10.1007/978-3-319-28082-0_30:

որն իր բնույթով բացարձակ է և չի թույլատրում որևէ սահմանափակում ... զրկում է այդ անձանց իրավական պաշտպանությունից և նրանց դարձնում է փրկարարական գործողության օբյեկտ, որն ուղղված է ահաբեկչական հարձակման հետևանքով երկրի վրա կորուստները նվազագույնի հասցնելուն: Սա, իր հերթին, հանգեցնում է յուրաքանչյուր անձի՝ որպես սուբյեկտի վերաբերվելու պարտավորության խախտման»[1]:

Այսպիսով, կարող ենք եզրահանգել, որ մարդկային արժանապատվությունը գործում է որպես «սահմանափակումների անհաղթահարելի սահմանափակում», որը համաչափության սկզբունքի համաժեքության գնահատման փուլում բացառում է մարդու հիմնական իրավունքների և ազատությունների այնպիսի սահմանափակումները, որոնց դեպքում մարդը պետության կողմից օգտագործվում է որպես միջոց, գործիք: Այդպսով, արժանապատվության իրավունքը բացառում է իրավունքի էությանն այնպիսի վնաս պատճառելը, որը չի կարող արդարացվել հետապնդվող նպատակի իրականացման արդյունքում որևէ օգուտով: Մարդկային արժանապատվության այս գործառույթը բխում է վերջինիս անխախտելիության, մարդու բոլոր սահմանադրական իրավունքների էության ելակետը լինելու գաղափարից և մարդու հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությամբ ամրագրված դրույթների էության անխախտելիության պահանջից:

Ամփոփելով արժանապատվության իրավունքի և համաչփության սկզբունքի հարաբերակցության հարցի ուսումնասիրությունը՝ ներկայացնենք հետևյալ հիմնական եզրահանգումները.

- ***արժանապատվության իրավունքի և համաչափության սկզբունքի հարաբերակցության առաջին ասպեկտը դրսևորվում է, երբ համաչափության սկզբունքը հանդես է գալիս արժանապատվության իրավունքի խախտման փաստը որոշելու գործիք՝ դառնալով արժանապատվության իրավունքի ծավալը որոշելու համար նշանակություն ունեցող հասկացությունների մեկնաբանության միջոց: Այդպիսով, այն դեպքում, երբ պետությունն օգտագործում է անհամաչափ միջոցներ, անխուսափելիորեն խախտում է մարդու արժանապատվության իրավունքը՝ նրան դիտարկելով որպես գործիք,***

- ***արժանապատվության իրավունքի և համաչափության սկզբունքի հարաբերակցության երկրորդ ասպեկտը դրսևորվում է, երբ մարդկային արժանապատվությունը գործում է որպես «սահմանափակումների անհաղթահարելի սահմանափակում», որը համաչափության սկզբունքի համաժեքության գնահատման փուլում բացառում է մարդու հիմնական իրավունքների և ազատությունների էության այնպիսի սահմանափակումները, որոնց դեպքում մարդը պետության կողմից օգտագործվում է որպես միջոց, գործիք: Այդպսով, արժանապատվության իրավունքը բացառում է իրավունքի էությանն այնպիսի վնասը, որը չի կարող արդարացվել հետապնդվող նպատակի իրականացման արդյունքում ծեռք բերվող որևէ օգուտով: Մարդկային արժանապատվության այս գործառույթը բխում է վերջինիս՝ մարդու բոլոր սահմանադրական իրավունքների էության ելակետը լինելու գաղափարից և նրա ու մարդու հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությամբ ամրագրված դրույթների էության անխախտելիության պահանջից:***

Կարծում ենք, որ այս եզրահանգումները կարող են գիտագործնական նշանակություն ունենալ ինչպես արժանապատվության իրավունքի, այնպես էլ արժանապատվության իրավունքից բխող այլ իրավունքների էության անխախտելիության ապահովման հարցադրումների համալիր հետազոտության և համարժեք լուծումներ առաջադրելու տեսանկյունից:

---

[1] Տե՛ս **Soniewicka M., Holocher J**. (2019) Human Dignity in Poland. In: Becchi P., Mathis K. (eds) Handbook of Human Dignity in Europe. Springer, Cham., էջ 704, https://doi.org/10.1007/978-3-319-28082-0_32

THE RELATIONSHIP OF DIGNITY AND THE PRINCIPLE OF PROPORTIONALITY

Kristine Aleksanyan
PhD student at the YSU Chair of Constitutional law

The article is devoted to the investigation of the relationship of dignity and the principle of proportionality. In the article, based on the study of Constitution, the judicial practice of the the Constitutional Court, as well as foreign countries and international judicial instances, the author came to the conclusion, that principle of proportionality acts as a means of interpreting concepts that are important for determining the scope of the right to dignity. Dignity, in turn, at the stage of assessing the adequacy excludes such restrictions on the essence of fundamental human rights and freedoms, in which a person is used by the state as an instrument.

СООТНОШЕНИЕ ДОСТОИНСТВА И ПРИНЦИПА СОРАЗМЕРНОСТИ

Кристине Алексанян
Аспирант кафедры конституционного права ЕГУ

Статья посвящена изучению соотношения достоинства и принципа соразмерности. В статье на основе изучения Конституции РА, практики Конституционного суда, а также опыта зарубежных стран и практики международных судебных органов автор пришел к выводу, что принцип соразмерности выступает как средство интерпретации понятий, имеющих значение для определения объема права на достоинство. Достоинство, в свою очередь, на этапе оценки эквивалентности исключает такие ограничения сущности основных прав и свобод человека, при которых человек используется государством в качестве инструмента.

Բանալի բառեր – *արժանապատվություն, համաչափության սկզբունք, համարժեքություն, սահմանադրական իրավունքի էություն, մեկնաբանության միջոց*
Ключевые слова: *достоинство, принцип соразмерности, эквивалентность, суть конституционного права, средство толкования*
Key words: *dignity, the principle of proportionality, adequacy, the essence of constitutional right, means of interpretation*